ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՅՈՒՆԻՍԵՖ, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ),

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ,

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԿ-Ի

ԵՎ

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,

ՄԻՋԵՎ

ՀՀ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՎԱՅՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Վանաձոր

< _____> մայիս, 2017թ.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) արտացոլում է կողմերի (այսուհետ՝ Կողմեր) համատեղ համագործակցության ըմբռնումը և համաձայնությունն այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների իրականացման ընթացքում, ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ իրականացվող *«Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների աջակցություն Լոռու մարզի փոքր բնակավայրերում»* ծրագրի (այսուհետ՝Ծրագիր) շրջանակներում:

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ–ը և Հայաստանի կառավարությունը ճանաչել են 0-6 տարեկան աղջիկների և տղաների և նրանց ընտանիքների իրավունքների իրացման առումով առաջընթացը դեպի որակյալ և վաղ մանկության տարիների ներառական կրթական ծառայություններ, ինչպես նաև խոցելի ընտանիքների կարիքների վրա հիմնված ծառայությունների մշակումը՝ ուղղված խնամք ապահովող, պաշտպանող և դիմակայուն ընտանեկան միջավայրում ապրելու երեխայի իրավունքի իրացմանը որպես 2016-2020թթ. Երկրում ՅՈՒՆԻՍԵՖ-ի Գործունեության ծրագրում ամրագրված առանցքային ռազմավարական ծրագրային ոլորտ,

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Հայաստանի կառավարությունը ճանաչել են գյուղական բնակավայրերում վաղ մանկության ուսումնառության ծառայությունների մատչելիության բարելավումը՝ որպես 2016-2020թթ. Երկրում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրի միջոցառումների պլանի /ԵԾՄՊ/ հիմնական արդյունք և համապատասխան 2016-2017թթ. Երկամյա համատեղ աշխատանքային ծրագրի/ԵՀԱԾ/ հիմնական գործունեություն,

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Հայաստանի կառավարությունը ճանաչել են Ինտեգրված սոցիալական ծառայությունների /ԻՍԾ/ բարեփոխումները որպես 2016-2017թթ. Երկամյա համատեղ աշխանանքային ծրագրի հիմնական արդյունք, մասնավորապես՝ խոցելի ընտանիքների և երեխաների սոցիալական պաշտպանության դաշտում ներգրավվածության ընդլայնման առումով,

Հաշվի առնելով այն, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Հայաստանի կառավարությունն ընդունել են երեխաների իրավունքների իրացման համար պետական բյուջետավորման իրականացման կարևորությունը՝ համաձայն Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի /ԵԻԿ/ Հոդված 4-ի և համապատասխան ԵԻԿ-ին կից թիվ 19 (2016) Հիմնական դիտարկման, ինչպես նաև Երեխաներին ուղղված պետական ֆինանսների մի շարք գործողություններ՝ որպես ԵԾՄՊ և ԵՀԱԾ փաստաթղթերում ամրագրված խաչվող նախաձեռնություններ,

Հաշվի առնելով այն, որ Կողմերը ճանաչել են երեխայի զարգացման և վաղ կրթության կարևորությունը հատկապես Հայաստանի գյուղական և առավել խոցելի բնակավայրերում, որտեղ առկա չեն նախադպրոցական ծառայություններ,

Հաշվի առնելով այն, որ Կողմերն ընդունում են Հայաստանում ներկայումս իրականացվող համայնքների խոշորացման վարչա-տարածքային և հանրային կառավարման բարեփոխման գործընթացը՝ որպես երեխայի իրավունքի հետագա իրականացման հնարավորություն կրթության, մասնավորապես վաղ զարգացման և ուսուցման ոլորտում,

ինչպես նաև պահպանելու այդ ջանքերը համապատասխան իրավական, քաղաքական և բյուջետային շրջանակներում,

Հաշվի առնելով այն, որ Կողմերը ընդունում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից Հայաստանի Սյունիքի մարզում իրականացված այլընտրանքային նախադպրոցական կրթության ծառայությունների մոդելը որպես ընդլայնելի, համապատասխան և ծախսարդյունավետ ծրագիր՝ հեռավոր համայնքների տղաների և աղջիկների համար, որտեղ չկան կամ դժվար հասանելի են պետության կամ համայնքի կողմից իրականացվող նախադպրոցական ծառայությունները,

Հիմք ընդունելով փոխադարձ վստահությունը և սերտ համագործակցությունը՝ **Կողմերն այսուհետ համաձայնում** են հետևյալի մասին.

1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1 Սույն Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի իրավունքներն ու պարտականությունները Լոռու մարզի Թումանյան բազմաբնակավայր համայնքում այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների իրականացման ընթացքում, որոնք նկարագրված են մանրամասնորեն սույն Հուշագրի հավելված 1 և 2-ում:

1.2 Հուշագիրը պետք է վերահսկի այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների իրականացման, կառավարման, ֆինանսավորման, հաշվետվությունների ապահովման և համայնքին հանձնման գործընթացների հետ կապված պարտավորությունների կատարումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերի պարտականությունները

2.1.1. Կողմերը համաձայնում են իրականացնել իրենց պարտականությունները սույն Հուշագրի դրույթներին համապատասխան և ըստ լիարժեք հաշվետվողականության, թափանցիկության, ներքին կառավարման վերահսկման սկզբունքների և նշված վերահսկողության մեխանիզմների:

2.1.2. *ՅՈՒՆԻՍԵՖ-ը համաձայնում է՝*

- Համակարգել բոլոր Կողմերի գործողությունները՝ այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների մշակման և իրականացման ընթացքում,
- Ապահովել վերահսկողություն, ուղղորդում և փորձագիտական աջակցություն ծրագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների մշակման և իրականացման փորձի և գիտելիքների փոխանակում,
- Ապահովել ֆինանսական միջոցների տրամադրումն իրականացնող գործընկեր կազմակերպություններին՝ համաձայն համատեղ մշակված աշխատանքային պլանի, և յուրաքանչյուր ծրագրային արդյունքի հաջող իրագործման նպատակով,

- Հետևել անվտանգության պահպանման հարցերին, և/կամ հաստատել շինարարական նախագիծը, ընտրված տեղամասը՝ հաշվի առնելով անվտանգության չափորոշիչները,
- Մշտադիտարկել և վերահսկել այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների իրականացումը շարունակական հիմունքով,
- Փաստաթղթավորել առաջընթացը և ապահովել փաստերի վրա հիմնված քաղաքականության իրազեկում համապատասխան նախարարությունների հետ՝ նոր ստեղծված ծառայությունների կայունությունն ապահովելու նպատակով:

2.1.3. *Թումանյան համայնքը համաձայնում է՝*

- Համակարգել համայնքում այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների զարգացմանն ու իրականացմանը վերաբերող բոլոր գործողությունները՝ կենտրոնանալով հատկապես Աթան, Ահնիձոր, Մարց և Շամուտ բնակավայրերի վրա, համաձայն սույն Հուշագրին կից հավելված 1-ի և 2-ի,
- Ապահովել նախադպրոցական ծառայությունների հետ կապված գույքի/ակտիվների/ համար պատասխանատու անձանց նշանակումը/լիազորումը Մարց, Շամուտ, Աթան և Ահնիձոր բնակավայրերում,
- Ապահովել նշանակված պատասխանատու անձանց մասնակցությունը նախադպրոցական ծառայություններին վերաբերող բոլոր վերապատրաստումներին և հանդիպումներին,
- Սահմանել համապատասխան ֆինանսական հատկացումներ համայնքային բյուջեում՝ նախադպրոցական ծառայությունների արդյունավետ իրագործման նպատակով, մասնավորապես անձնակազմի պահպանման հետ կապված /լրիվ կամ կես դրույքով դաստիարակի առկայություն յուրաքանչյուր նախադպրոցական ծառայության համար/,
- Սահմանել ծնողական վճարների դրույքաչափը, ծնողական վճարներն հաշվարկելու և գանձելու կարգը կամ համապատասխանեցնել դրանք ավագանու կողմից հաստատված կարգին,
- Ապահովել ծնողական վճարների դրույքաչափի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում վճարների մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ ավագանու սահմանած կարգով իրազեկումը,
- Ապահովել նախադպրոցական ծառայությունների արդյունավետ գործունակությունն առնվազն հինգ տարի ժամանակահատվածում՝ համայնքային բյուջեում արտացոլված համապատասխան պարտավորությամբ՝ սկսած ծրագրի արդյունքների փաստացի հանձնման պահից, մասնավորապես շարունակական պահպանման և ընթացիկ վերանորոգումների մասով /անհրաժեշտության դեպքում/,
- Գրանցել նախադպրոցական ծառայություններին վերաբերող հիմնական ակտիվները համայնքի հաշվեկշռում՝ երաշխավորելով տվյալ ակտիվների համայնքային սեփականության իրավունքը /համայնքի ավագանու որոշում համապատասխան ակտիվները համայնքային սեփականության կապիտալ ակտիվների ցանկում գրանցելու և Թումանյան համայնքին հատկացնելու մասին/,
- Տեղեկացնել Կողմերին ծրագրի իրականացման ընթացքում առաջացող հարցերի/խնդիրների և փոփոխությունների մասին ,

- Խթանել և իրազեկել այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների ընդլայնումը այլ բազմաբնակավայր խոշորացված համայնքներում /կլաստերներում/՝ փորձի փոխանակման միջոցով:

2.1.4. *Իրականացնող գործընկեր - «Քայլ առ Քայլ» ԲՀ-ն համաձայնում է՝*

- Իրականացնել այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունները՝ համաձայն սույն Հուշագրի հավելված 1-ում և 2-ում ներկայացված նկարագրությունների, բյուջեի և ժամանակացույցի,
- Կառավարել ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից տրամադրված ֆինանսական միջոցները պատշաճ և թափանցիկ եղանակով,
- Ապահովել ծրագրի իրականացման համաֆինանսավորումը կամ մասնակի ներդրումը,
- Ապահովել մենթորական աջակցություն մանկավարժական անձնակազմին,
- Ապահովել ծրագրի հատկացումները համայնքին փոխանցելու գործընթացը և փաստաթղթավորումը՝ համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի կանոնակարգերի /ընդունման – հանձնման ակտ, այլն/,
- Տեղեկացնել Կողմերին ծրագրի իրականացման ընթացքում առաջացող հարցերի/խնդիրների և փոփոխությունների մասին,
- Համակարգել հանրային տեսանելիության հետ կապված գործունեությունը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ՝ ապահովելով լիարժեք տեսանելիություն ծրագրի ուղեցույցային դրույթներին համապատասխան:

2.1.5. *Իրականացնող գործընկեր - Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ-ն համաձայնում է՝*

- Սերտորեն աշխատել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Թումանյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և Լոռու մարզպետարանի հետ՝ ապահովելու այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների իրավական, կազմակերպական և ֆինանսական կայունությունը՝ համայնքների խոշորացման համատեքստում, մասնավորապես.
  1. Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների իրավական կարգավիճակի ՀՀ օրենսդրության ընձեռած հնարավորությունների շրջանակներում գրանցում,
  2. ֆինանսական միջոցների նախատեսում՝ այլընտրանքային նախադպրոցական ծառայությանը վերաբերող ընթացիկ ծախսերի մասով, մասնավորապես անձնակազմ և կոմունալ ծախսեր,
  3. Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների արժեքի գնահատում, մոդելավորում և առաջարկությունների մշակում՝ մոդելը մյուս խոշորացված համայնքներում /կլաստերներում/ ընդլայնելու առումով:

2.2. Կողմերի իրավունքները

2.2.1 Կողմերն իրավունք ունեն ցանկացած ժամանակ տեղեկատվություն ստանալ, ստուգել և բացատրություն պահանջել ցանկացած մյուս Կողմի պարտականությունների, մատուցվող ծառայությունների ընթացքի և որակի, ինչպես նաև հուշագրում սահմանված այլ գործողությունների վերաբերյալ՝ համապատասխան սույն Հուշագրի դրույթների և հավելված 1-ի ու 2-ի պահանջների:

2.2.2. Միակողմանի լուծել սույն Հուշագիրը, եթե Կողմերից մեկը էականորեն խախտել է սույն Հուշագրի դրույթները:

2.2.2.1. Խախտումն էական է համարվում, եթե

ա/ մատուցված ծառայությունը կամ գործողությունը չի համապատասխանում սույն Հուշագրի դրույթներին կամ հավելված 1–ով և 2-ով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել են ծառայության մատուցման ժամկետները:

2.2.3. Կողմերի իրավունքներն իրագործվում են նաև համաձայն Կողմերի հետ կնքված առանձին պայմանագրերի:

3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Կողմերը (համայնքը և իրականացնող գործընկերները) կտրամադրեն բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ ծրագրի իրականացման ընթացքում՝ համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ կնքված պայմանագրերի:

3.2. Սույն Հուշագիրը չի ենթադրում որևէ ֆինանսական աջակցություն/ներդրում, բացի նրանցից, որոնք ամրագրված են Իրականացնող գործընկերների հետ կնքված պայմանագրերում:

4. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Հուշագրի հետ կապված բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

4.2. Իրականացնող կողմերի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի միջև վեճերը լուծվում են ըստ համապատասխան կնքված պայմանագրերի դրույթների և ընթացքի:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն Հուշագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում՝ Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Հուշագիրը կնքելուց հետո, և, որը Կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն Հուշագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Հուշագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին կամ Կողմերին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Հուշագիրը կարող է փոփոխվել Կողմերի լիազոր ներկայացուցիչների գրավոր փոխադարձ համաձայնությամբ: Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելուց հետո և ուժի մեջ է մնում, քանի դեռ չի փոփոխվել կամ դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ:

6.2. Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնել սույն Հուշագիրը՝ այլ Կողմերին ներկայացնելով իր գրավոր ծանուցումը երեսուն (30) օր առաջ: Մասնակի դադարեցման դեպքում՝ այդպիսի ծանուցումը պետք է պարունակի դադարեցվող գործունեության ցանկը:

6.3. Ի հաստատում վերոհիշյալի՝ ներքոստորագրյալներս, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցինք սույն Հուշագիրը _____ Վանաձոր քաղաքում, հայերեն և անգլերեն լեզուներով՝ չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թումանյանի համայնք

Լևոն Զավարյան

Համայնքի ղեկավար

Ստորագրություն _____

Ամսաթիվ _____

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

Տանյա Ռադոչայ

ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Հայաստանում

Ստորագրություն _____

Ամսաթիվ _____

«Քայլ առ Քայլ» բարեգործական հիմնադրամ

Ռուզաննա Ծառուկյան

Գործադիր տնօրեն

Ստորագրություն _____

Ամսաթիվ _____

Համայնքների ֆինանսիստների միավորում ՀԿ

Վահան Մովսիսյան

Նախագահ

Ստորագրություն _____

Ամսաթիվ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ծրագրի ընդհանուր նկարագրություն և իրականացման չափորոշիչներ և պահանջներ

1.1. Այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայության համար ընտրված տարածքի նախապատրաստում

1.1.1. Կախված այն բանից, թե համայնքը /բնակավայրը 3-6 տարեկան երեխաների համար նախատեսված այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայության ինչպիսի մոդել է ընտրում, տարածքը կարող է լինել գործող դպրոցի շենքում գտնվող մի դասարան և միջանցքի մի փոքր հատված՝ հանդերձապահարանների համար (եթե դասարանը փոքր է):

1.1.2. Մեկ այլ դեպքում այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունը կարող է տեղավորվել որևէ դատարկ շինությունում կամ զբաղեցնել համայնքում գործող որևէ շինության մի հատվածը:

1.2. Ընտրված տարածքին ներկայացվող հիմնական պահանջները հետևյալն են.

- բնական և արհեստական լուսավորության առկայություն,
- խմելու ջրի առկայություն կամ հնարավորություն,
- առանձին մուտք կամ երեխաների ելումուտի համար ապահով պայմաններ (առաջին հարկ, ոչ բարձր աստիճաններ, անվտանգ տեղաշարժվելու հնարավորություն և այլն),
- հոսող ջրով ապահովված, բարեկարգ զուգարանի առկայություն շենքի ներսում կամ դրսում (ոչ հեռու),
- բացօթյա ապահով խաղային տարածքի կամ խաղահրապարակի առկայություն՝ բակային և սպորտային խաղերի համար:

1.3. Երեխաների անվտանգության ապահովում

1.3.1. Նախադպրոցական ծառայության տարածքում երեխաների անվտանգությունը պետք է ապահովված լինի ինչպես շենքի ներսում, այնպես էլ դրսում: Մանկապարտեզում գտնվելու ողջ ընթացքում յուրաքանչյուր երեխա պետք է գտնվի դաստիարակի տեսադաշտում:

1.3.2. Խաղերը, ուսումնական սարքավորումները և կահույքը չպետք է ունենան սուր անկյուններ, եզրեր, ժանգոտ և չամրացված մասեր: Կահույքը և սարքավորումները պետք է այնպես դասավորված լինեն, որ խաղի ժամանակ երեխաներին չխանգարեն և վնասվածք չպատճառեն:

1.3.3. Էլեկտրական տաքացուցիչները պետք է երեխաների հասանելիությունից դուրս լինեն, և երբեք ոչ մի բաց էլեկտրական լար չպետք է լինի սենյակում:

1.3.4. Շարժական աստիճանները, սահարանները և ճոճանակները պետք է դրված լինեն դրանց համար հատուկ նախատեսված տեղերում: Բոլոր սարքավորումները պետք է լավ տեղադրված, ամրացված և ներկված լինեն: Խաղահրապարակի առկայության պարագայում այն պետք է ծածկված լինի ավազով, խոտով կամ էլ ռետինե ծածկով: Թունավոր և փշոտ բույսեր չպետք է աճեն մանկապարտեզի տարածքում:

1.3.5. Նախադպրոցական ծառայությունը պետք է ունենա արտակարգ իրավիճակների համար տարհանման (էվակուացիայի) պլան և հասանելի կրակմարիչներ: Դաստիարակը կամ նշանակված մի այլ մեծահասակ պետք է պատասխանատու լինի երեխաներին

տարիանմանը պատրաստելու և արտակարգ իրավիճակներում նրանց առաջնորդելու համար:

1.3.6. Տարածքի մուտքը և ելքը պետք է կողպեքով փակված չլինեն, և ոչ մի խանգարող բան չպետք է լինի մտնելու և դուրս գալու համար:

1.4. Սանիտարահիգիենիկ նորմեր

1.4.1.Նախադպրոցական ծառայությունը պետք է ապահովված լինի մաքրելու անհրաժեշտ միջոցներով և պարագաներով (ավել, գոգաթի, սրբիչներ, խոզանակներ, մաքրող-ախտահանող նյութեր և այլն), որպեսզի երեխաների համար ստեղծված միջավայրը միշտ լինի մաքուր, հիգիենիկ և ապահով առողջության համար: Խմբասենյակում փոշեկուլ ունենալը պարտադիր է:

1.4.2.Սանհանգույցը պետք է լինի մատչելի, երեխայի չափերին համապատասխան, մաքուր, հարմարավետ, հայելիով: Երեխան պետք է այնտեղ ազատ ելումուտ ունենա, կարողանա ինքնուրույն օգտվել դրանից: Զուգարանակոնքերը պետք է լինեն ցածր, երեխայի հասակին համապատասխան, լվացարանները՝ լվացվելու հարմար: Յուրաքանչյուր երեխա պիտի ունենա իր անհատական սրբիչը և բաժակը: Ե՛վ սանհանգույցում, և՛ խմբասենյակում փակ աղբամաններ պիտի լինեն:

1.4.3.Հանդերձարանը կարող է խմբասենյակի մաս կազմել կամ առանձին սենյակում լինել: Կոշիկների տեղը կարող է անհատական պահարանում լինել: Երբեմն դա կարող է ընդհանուր լինել՝ պատի տակ, կողք կողքի շարված:

1.5. Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների համար ուսուցանող աշխատակազմի (դաստիարակների) ընտրություն և վերապատրաստում

1.5.1. Ընտրվող դաստիարակներին ներկայացվող որակավորման պահանջներն են՝

Այլընտրանքային նախադպրոցական ծառայության դաստիարակը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում կամ մանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:[1]

Բացի վերոհիշյալից, թեկնածուներին առաջադրվող պահանջները, ներառում են նաև խոսքի գրագիտություն, մասնակցություն համայնքում իրականացվող այլ ծրագրերին, երեխաների և ծնողների հետ աշխատելու մոտիվացիա, համայնքում ունեցած բարձր վարկանիշ և այլն:

1.5.2.Դաստիարակների վերապատրաստում, որն իրականացվում է փուլերով: Աշխատանքը պետք է ընդգրկի կենտրոնացված վերապատրաստումներ և տեղերում անհատական մասնագիտական խորհրդատվություն: Վերապատրաստումներն անցկացնելիս պետք է հիմնվել դաստիարակի ուղեցույցի վրա («Փոքր համայնքներում այլընտրանաքային ծառայությունների կազմակերպումը 3-6 տարեկան երեխաների համար»), որը մշակվել է Սյունիքի մարզում իրականցված ծրագրի արդյունքում:

1.5.3.Դաստիարակները պետք է ընտրվեն այն բնակավայրից, որտեղ իրականացվում է այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունը:

---

[1] Որպես հիմք օգտագործված է ՀՀ կրթության և գիտության նախարարի՛ ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆառրակավորման բնութագրերը հաստատելու մասին՛ թիվ 416–Ն հրաման, 26.04.2011թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ***Լոռու մարզի Թումանյան բազմաբնակավայր համայնքում այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների իրականացման աշխատանքների նկարագիրը և դրանց բաշխումը Կողմերի միջև***

1. Սույն հավելվածով սահմանվում են Լոռու մարզի Թումանյան բազմաբնակավայր համայնքում այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների իրականացման ընթացքում Կողմերի աշխատանքները և դրանց բաշխումը համայնքի/բնակավայրերի և «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի միջև:
2. Բոլոր բնակավայրերում նախատեսված աշխատանքներն իրականացվում են հետևյալ սկզբունքով՝ աշխատուժի ծախսերն իրականացվում են համայնքի/բնակավայրի ուժերով, իսկ նյութածախսը և կահավորման ծախսերն իրականացվում են «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսավորմամբ:
3. Համայնքի կողմից իրականացվող բոլոր աշխատանքները կատարվում են «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի կողմից իրականացվող աշխատանքներին զուգահեռ և ըստ հաստատված ժամանակացույցի:
4. Բոլոր աշխատանքներն իրականացվում են համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, իսկ աշխատանքների շինարարական նախագծերը կցվում են սույն հավելվածին:

4.1. Թումանյան բազմաբնակավայր համայնքում «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի կողմից իրականացվելու են նախադպրոցական կրթական ծառայության մեկ խմբասենյակի կահավորման աշխատանքները:

4.2. ա/ Ահնիձոր բնակավայրում նախադպրոցական կրթական ծառայությունը հիմնվելու է գյուղապետարանի շենքում: Համայնքի կողմից իրականացվելու են հետևյալ հավելյալ աշխատանքները.

- Արտաքին ջրագծի և կոյուղու անցկացման աշխատանքներ,
- Շենքի նախամուտքի աստիճանների կողային բազրիքների պատրաստման և տեղադրման աշխատանքներ,
- Հարակից հին շենքի բարեկարգման, մաքրման աշխատանքներ,
- Բուն շենքի տակի լիցքի իրականացման և ամրացման աշխատանքներ:

բ/ Ահնիձոր բնակավայրում «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի կողմից իրականացվելու են հետևյալ գործողությունները.

- հարդարման նյութերի տրամադրում,
- ներքին ջրամատակարարման նյութերի տրամադրում,
- ներքին էլեկտրամատակարարման նյութերի տրամադրում,
- մեկ խմբասենյակի կահավորման պարագաների (կահույք և ուսումնախաղային նյութեր) տրամադրում:

Հատակագիծը կցվում է:

գ/ Ահնիձոր բնակավայրում Կողմերի կողմից աշխատանքների համաժամանակյա իրականացումն ապահովելու նպատակով Համայնքը համաձայնել է կատարել որոշ ծախսային տեղաշարժեր /2018թ.-ի բյուջեից՝ 2017թ. բյուջե/:

4.3. Շամուտ բնակավայրում նախադպրոցական կրթական ծառայությունը հիմնվելու է դպրոցի տարածքում: «Քայլ առ Քայլ»ԲՀ-ի կողմից իրականացվելու են հետևյալ գործողությունները.

- հարդարման նյութերի տրամադրում,
- ներքին ջրամատակարարման նյութերի տրամադրում,,
- ներքին էլեկտրամատակարարման նյութերի տրամադրում,,
- մեկ խմբասենյակի կահավորման պարագաների (կահույք և ուսումնախաղային նյութեր) տրամադրում:

  Հատակագիծը կցվում է:

4.4. ա/ Աթան բնակավայրում նախադպրոցական կրթական ծառայությունը հիմնվելու է մանկապարտեզի շենքում: Համայնքի կողմից իրականացվելու են հետևյալ հավելյալ աշխատանքները.

- Արտաքին ջրագծի և կոյուղու անցկացման աշխատանքներ,
- Բուժկետի և հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքներ, որոնց իրականացումն անհրաժեշտ է ապահովել «Քայլ առ Քայլ»ԲՀ-ի կողմից իրականացվող աշխատանքների ժամանակացույցին համահունչ՝ ըստ հնարավորության:

բ/ Աթան բնակավայրում «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի կողմից իրականացվելու են հետևյալ գործողությունները.

- հարդարման նյութերի տրամադրում,
- ներքին ջրամատակարարման նյութերի տրամադրում,
- ներքին էլեկտրամատակարարման նյութերի տրամադրում,
- մեկ խմբասենյակի կահավորման պարագաների (կահույք և ուսումնախաղային նյութեր) տրամադրում:

  Հատակագիծը կցվում է:

4.5. Մարց համայնքում նախադպրոցական կրթական ծառայությունը հիմնվելու է դպրոցի տարածքում: «Քայլ առ Քայլ» ԲՀ-ի կողմից իրականացվելու են նախադպրոցական կրթական ծառայության երկու խմբասենյակի կահավորման պարագաների (կահույք և ուսումնախաղային նյութեր) տրամադրում:

Շամուտ բնակավայրի նախադպրոցական կրթական ծառայության հատակագիծ

ՀԱՏԱԿԱԳԻԾ





Ահնիձոր բնակավայրի նախադպրոցական կրթական ծառայության հատակագիծ

ՀԱՏԱԿԱԳԻԾ (վերահատակագծում)



Աթան բնակավայրի նախադպրոցական կրթական ծառայության հատակագիծ

ՀԱՏԱԿԱԳԻԾ (վերահատակագծում)